ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4

ք.Երևան

«18» 10 2022 թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդուարդ Խանզրադյանի, ով գործում է ՀՀ ԱԺ նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի Կ-294-Ա կարգադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Հիպերնովա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Ալեքսանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, Պատվիրատու և Կատարողը միասին (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԱԺ ավտոտնտեսության աշխատասենյակների, զուգարանների և աստիճանավանդակի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված Աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված Աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի գինը կազմում է 10934480 (տասը միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ

սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր
կատարող, աշխատակազմի ղեկավարի
տեղակալ Էդուարդ Խանզրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հիպերնովա» ՍՊԸ
Նոր Խարբերդ համայնք, Երևան-Արտաշատ
խճուղի 113,115
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500010735690100
ՀՎՀՀ՝ 00924152
Տնօրեն՝ Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«18» 10. 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
							կատարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	45461100/504	ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ ԱԺ ավտոտնտեսության աշխատասենյակների, զուգարանների և աստիճանավանդակի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որին կցվում է Հավելված 1.1 (Ծավալաթերթ-նախահաշիվ)	դրամ	10934480	10934480	1	Բաղրամյան 19	ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած ("Գնումների մասին" օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մաս): Աշխատանքների ավարտը համաձայնագիրն՝ ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 40-րդ աշխատանքային օրը, որպես ամսաթիվ նշանակելիս դրա վերջակետը համարվում է այդ ամսաթիվը կարճ ժամկետում:

Մասնակիցը պետք է ներկայացնի նաև աշխատանքային ռեսուրսներ՝ Աշխղեկ Ինժեներ-շինարար <<ԱՔՇ>>, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով և տեխնիկական միջոցներ՝ մեկ ինքնաթափ ավտոմեքենա: Մասնակիցը իր կողմից կատարված Աշխատանքների որակի համար պետք է տրամադրի առնվազն 3 տարվա երաշխիք:

* *Աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
** *Եթե Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր
կատարող, աշխատակազմի ղեկավարի
տեղակալ Էդուարդ Խաչգրադյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հիպերնովա» ՍՊԸ
Նոր Խարբերդ համայնք, Երևան-Արտաշատ
խճուղի 113,115
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500010735690100
ՀՎՀՀ՝ 00924152
Տնօրեն՝ Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 18 » 10 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով Պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱԺ ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ՁՈՒԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ ԸՆԹԱՅԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

	Հիմնա-վորում	Աշխատանքի անվանում, ներառյալ անհրաժեշտ նյութերը	Չափման միավոր	Քանակ	Միավ. արժեքը ՀՀ դրամ /հազ.դրամ/	Ընդհանուր արժեք ՀՀ դրամ /հազ.դրամ/	Գումարը տոկոսներով
1	2	3	4	5	6	7	8
1	Նորմատ գին	Ավտոտնտեսության սանհանգույցների սալիկների քանդում, բետոնե շերտերի հետ միասին, ինչպես նաև առաջացած շին աղբի բեռնում մեքենայի մեջ և տեղափոխում 18կմ:	տ.	28	5.5262	154.734	1.8
2	Շուկա	Միջանցքների, աշխատասենյակների և սանհանգույցների էլեկտրական մալուխների փոխարինում (մոնտաժում), պատերի մեջ հորատմամբ, այդ թվում՝ 2x4 -100մ, 2x2.5 -500մ և 2x1.5 -100մ:	մ	700	0.5649	395.430	4.6
3	Շուկա	Առկա (հին) վարդակների, անջատիչների և բաժանարար տուփերի ապամոնտաժում և նորերի մոնտաժում, այդ թվում՝ բաժանարար տուփեր - 15 հատ, վարդակներ՝ 1 տեղանի - 60 հատ, անջատիչներ 1 տեղանի -14 հատ, անջատիչներ 2 տեղանի - 3 հատ: Բոլոր ապրանքները պետք է լինեն բարձր որակի Titan ապրանքանիշի:	դրամ	1	240.721	240.721	2.8
4	Շուկա	Առաջին և երկրորդ հարկերում տեղադրել էլ. ավտոմատ անջատիչներ համապատասխան տուփերով՝ 12 և 8 տեղանոց, այդ թվում էլ. ավտոմատ անջատիչները՝ եռաֆազ-63A-1 հատ, միաֆազ-63A-2 հատ, միաֆազ-25A-4 հատ, միաֆազ-16A-4 հատ, միաֆազ -40A-3 հատ: Բոլոր ապրանքները պետք է լինեն բարձր որակի LEGRAND ապրանքանիշի:	դրամ	1	68.770	68.770	0.8
5	Շուկա	Արտաքին ԼԵԴ լուսատուների տեղադրում, այդ թվում՝ 15 հատ 30 վատ հզորությամբ, ինչպես նաև պատվիրատուի կողմից տրամադրած թվով՝ 7 հատ 5 տեղանոց ջահերի:	դրամ	1	103.155	103.155	1.2
6	Շուկա	Աշխատասենյակների և միջանցքների պատերը և առաստաղը մաքրել հին ներկից և քայքայված սվաղից: Մածկել և կրկնակի ներկել բարձրորակ լատեքսային ներկով: Գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	ք/մ	876	1.9626	1,719.238	20
7	Շուկա	Միջանցքների և աստիճանավանդակների պատերը մաքրել հին յուղաներկից և քայքայված սվաղից: Մածկել և կրկնակի ներկել յուղաներկով, հատակից 1,6մ բարձրությամբ: Գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	ք/մ	116	2.5196	292.274	3.4
8	Շուկա	Աշխատասենյակի պատի հաստեցում՝ 10սմ., դրսի կողմից, 2.2*2.5 պեմզաբլոկով:	ք/մ	6	2.8654	17.192	0.2
9	Շուկա	Աստիճանավանդակի ճաղաշարերի բազրիքների վնասված փայտե մասերի վերականգնում, հղկում, ներկում և լաքապատում: Մետաղական ճաղաշարերի և հեծանների հղկում և ներկում յուղաներկով՝ կրկնակի: Գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	դրամ	1	68.770	68.770	0.8

10	Շուկա	Սանհանգույցների պատերի սալիկապատում բարձրորակ սալիկներով: Անհրաժեշտ է ապամոնտաժել հին կոյուղագծերը և մետաղապլաստե խողովակները իր կցամասերով և մոնտաժել նորերով, այդ թվում՝ 10մ կոյուղագիծ և 20մ խողովակ: Օգտագործվող բոլոր նյութերը պետք է լինեն բարձրորակ: Սալիկների չափսերը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	քմ	60.5	13.072	790.856	9.2
11	Շուկա	Քանդել միջանցքների բետոնե շերտը, հարթեցնել ցեմենտ ավազի շաղախով և սալիկապատել: Օգտագործել բարձր որակի սալիկներ և սալիկի սոսինձ: Սալիկի չափսերը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	քմ	85.88	13.0125	1,117.513	13
12	Շուկա	Կերամիկական շրիշակների կտրում և տեղադրում H=100մմ	գմ	78.96	1.3064	103.153	1.2
13	Շուկա	Թվով՝ 2 սանհանգույցներում տեղադրել նոր զուգարանակոնք - 2 հատ, լվացարան ծորակով -3 հատ, միզաման- 2 հատ, բոլոր անհրաժեշտ դետալները ներառյալ (գոֆրե, փական և այլն):	լրակազմ	1	257.889	257.889	3
14	Շուկա	Ապամոնտաժել առկա՝ 8 հատ պատուհանները և պատուհանգոգերը, տեղադրել նոր պատուհանագոգեր՝ 4 հատ և եվրոպատուհաներ՝ 8 հատ, բոլորը բարդ փականներով: Չափսերը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	քմ	23.29	50.3819	1,173.394	13.65
15	Շուկա	Ապամոնտաժել առկա՝ 9 հատ, փայտե դռները և տեղադրել 9 հատ, նոր եվրոդռներ՝ իրենց փականներով: Չափսերը, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	քմ	19.64	59.7451	1,173.394	13.65
16	Շուկա	Քանդել 2 -րդ հարկի աշխատասենյակների հին, քայքայված մանրահատակն ու լամինատե հատակը և տեղադրել նոր լամինատե հատակներ: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	քմ	123.9	6.5912	816.650	9.5
17	Շուկա	Քանդել 2-րդ հարկի աշխատասենյակների շրիշակները և տեղադրել նոր լամինատե շրիշակներ: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	գմ	91.2	1.1311	103.156	1.2
		Ընդամենը				8,596.289	100.0
		Չնախատեսված ծախսեր 6 % (որից 3 %-ը կատարողին)				515.777	
		Ընդամենը				9,112.067	
		ԱԱՀ 20 %				1,822.413	
		ԸՆԴԱՄԵՆԸ				10,934.480	

Շահույթն ու վերադիր ծախսերը ներառված են գնի մեջ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող,
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդուարդ
Խանզադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հիպերնովա» ՍՊԸ
Նոր Խարբերդ համայնք, Երևան-Արտաշատ
խճուղի 113,115
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500010735690100
ՀՎՀՀ՝ 00924152
Տնօրեն Ա. Այեբսանյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«18» 10. 2022 թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը /4251/	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/504	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ Պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք.Երևան, Մ.Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր
կատարող, աշխատակազմի ղեկավարի
տեղակալ Էդուարդ Խանզրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հիպերնովա» ՍՊԸ
Նոր Խարբերդ համայնք, Երևան-Արտաշատ
խճուղի 113,115
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2500010735690100
ՀՎՀՀ՝ 00924152
Տնօրեն՝ Ա. Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
« 18 » 10 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ Աշխատանքները՝

N	Կատարված Աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«18» 10 2022թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն